

Րաֆֆի Անէմեան՝
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԽՈՒՍԱՓՈՂ

Գրիգոր Պըլտեան՝
ՆԱՄԱԿ ՀԱԿԱՔԵՐԹՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Բաֆֆի Աճէմեանի խուսափող հանդիպումը դրուած է Գրիգոր Պըլտեանի Զրոյցներ բանաստեղծութեան մասին գրքին առիթով եւ անոր շուրջ:

Հակաքերթուած ին անդրադարձող նամակը տպուած է այժմ այդ հատորին մէջ (էջ 55-78): Զայն կը հրամցենք հոս կրկին, չնչին սրբագրութիւններով (հեղինակային): Այդ նամակին կ'ընկերանար 12 Ապրիլ 1985ի թուակիր երկտող մը, զոր ահաւասիկ.

“Մարկ,

Նամակը, որ պիտի գտնես ասոր կցուած, պիտի գրէի քեզի շատոնց, Տէսինի, յետոյ Փարիզի մէջ ըրած բանախօսութիւններուդ առթիւ Վայրերուն շուրջ, ոչ միայն շնորհակալութիւն յայտնելու համար, այլեւ կողմնորոշում մը որդեգրելու համար աշխատանքիդ առջեւ. եթէ կարելի է նման բան ընել, միայն լսուածին վստահելով:

Պիտի տեսնես որ այդ կողմնորոշումը պիտի չընեմ: Անկարելի է: Մա՛նաւանդ որ մտքիս մէջ արձանագրուած էր մէկ հարցումդ, որուն պատասխանի փորձ մըն է ներփակը: Առիթ, որ բանամ հին տետրակներ, հոնկէ հանելու համար նօթեր, որ քեզի կը յանձնեմ: Արտադրեցի առանց որեւէ յաւելումի, կէտագրութիւնը՝ թերի, ամբողջացնելով: Փորձեցի տակաւին չեղածը չկանխել, յաջողեցա՞յ, չեմ գիտեր:... Գ.Պ.”

Հետագային ուրիշ դասախօսութիւններ ալ տուած եմ Գ.Պ.ի բանաստեղծական գործին մասին. 1986ի գարնան, Լոս Անճելըսի UCLA համալսարանը, Պրոֆ. Աւետիս Սանճեանի հրաւերով կայացած սեմինարի մը ընթացքին, եւ 1987ի գարնան, Փարիզի մէջ, Le Triangle Ընկերակցութեան կազմակերպած շաբթի մը ծիրին մէջ, որուն մասնակից էր նոյնպէս՝ Գրիգոր Պըլտեան: Առաջինը՝ հայերէն, երկրորդը՝ որքան կը յիշեմ՝ ֆրանսերէն: Բոլոր այս դասախօսութիւնները մնացած են ցարդ անտիպ:

Մ.Ն.

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԽՈՒՍԱՓՈՂ

Գրիգոր Պըլտեան՝ Զրոյցներ Բանաստեղծութեան մասին

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Կը նստիս, կը պատրաստուիս անոր, ցանկութեամբ: Ստեղնաշարին վրայ իրար հալածող ձեռքերուն նման խուսափեցին՝ անընդհատ մեղեդին կրկնող, երբեք խաչաձևող: Հանդիպումը, որ նախ՝ ընթերցում մըն է, մօտեցման փորձ մը դիրքին ուրկէ կը մեկնիս, էջին հակած, ունկնդրած ձայնին, որ կու գայ դիմացէն՝ զրուցողին կողմէն, որ մերթ կը սկսի, մերթ կը լռէ: Ընթերցումը, որ նախ պարապ էջն է մտքին՝ ձայնին տրամադրուող, որ պիտի գրէ նոր, ամէն անգամ որ կը սկսիս կարդալ, այսինքն լսել: Կը փոխ գայն ընդ առաջ ձայնին՝ ձայնագրիչի ժապաւէն, որ հիմա պիտի ջնջէ ու կրկնագրէ:

ՏԵՂԸ ԳՐՈՒԹԵԱՆ

Քաղաքն էր, սկիզբէն քանդուած, աւերակի շերտերը իրար հրմշտկող՝ ծածկող, հին օրերու օրէնքի մը խաբկանքի ջուրերուն յանձնուած: Հին քաղաքին դռները՝ Պապ Իսրիսէն մինչեւ..., որոնց միայն անունները կը մնային՝ կիսափուլ սիւներու դրացնութեանը մէջ նախկին քաղաքներուն, ու մնացեր էին փակ՝ յար եւ նման կորսուած օրէնսդրութեան առասպելին՝ անհաղորդ:

Նորը՝ գէնքին օրէնքն էր, կոտորող ամէն դաշնութեան պատրանք ու բարեկեցիկ օրերու յիշողութիւն: Հրացանաձգութիւնը էջը կը ծակծրկէր, գետին ձգելով պատերէն կախուած պատկերներ: Մէկը պատըշգամը կանգնած լուսնին հմայքը կ'երգէ: Զկայ առասպելի օրէնք, չկայ նուագահանդէս: Դպրոցները աշակերտները տուն կը դրկեն: Վաղը առտու դիւան հեռաձայնեցէ՛ք ձեր գաւակները նամբայ չհանած: Հեռաձայնել՝ եթէ հեռաձայնները բանին անշուշտ: Իսկ այս օրերուն, ո՛վ կը համարձակի նամբայ ելլել, ուր մնաց՝ վտանգել ինքզինք:

Տեղը կար, մէջդ տեղ մը, հաւանաբար առաջին օրէն երբ անունը կը յայտնուէր մտփող հորիզոնին, այն օրէն երբ կը սկսէիր տրամադրուիլ գրութեան, անոր գրուելու կերպին: Գրել քաղաքը՝ բերել գայն էջին, անոր մէջ բնակող բրտութեամբ ու հակասութիւններով, քաղաքին կոիւնները, հրթիռներուն սուլոցը շէնքերուն վրայէն՝ մէկ կողմէն միւսը, երթալ պայթելու համար հեռուն: Արդէն միշտ հեռու մնացեր էինք, կիսով մը ապօրէն՝ անհանգրուան: Գրել հակասութիւնը օրէնք / բրտութեան, մէկը միւսին մէջ, մէկը միւսէն բխող: Բայց նաեւ կոտորատումը՝ կոտորակումը քաղաքին լեզուով մը, որ կարենար ապրիլ ու ապրիլեցնել այդ փլուզման համակարգը անհետացող: Լեզու մը, որ բերէր հակասութիւններն ու տարբեր ձայները բով բովի՝ մէկը զառնէր միւսին, բեմադրէր անոնց հրավառութիւնը:

Տեղը գրութեան՝ վայրն է ուրկէ կարելի է հարցա-դրել՝ հարցումներ դնել: *Տեղագրութիւնը* կը գրէ տեղը ուր կարելի է կենալ, ժամանակը հաւաքել: Քանդուած ժամանակը:

ՔԵՐԹՈՒԱԾԸ՝ ՔԱՆԴՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԵՋ

Ինչո՞ւ բանաստեղծութիւն կը գրէք: Հարցումը դուրսէն եկող, ընդ-հանրացնող, գիրքն աշխարհն ու գրելու արարքը մէկ շարժումի մէջ ներգրաւող: Բայց նաեւ ներսէն՝ պատասխանին մէջէն, երբ գրելը ինքնին պատասխան մըն է՝ հարցումին, որ իր մէջ կը բնակի:

Նախ՝ քանդուած ժամանակը, որ ժամանակ չէ, չի բռնուիր ուղեանի մը մէջ որ կուտակուէր, չի խտանար որպէսզի փոխանցուէր, աւանդուէր, դառնար պատմութիւն: Ժամանակը հովին տրուած, բամպակի դաշտե-րուն, զուրկ փշաթելէ ցանկապատերէ, թուփերը պաշտպանող ծածկէ, երբ բամպակի կոյտերը կը տարտղնուէին բաց երկնքին տակ: Հրկի-զումին ժամանակը, երբ բոցերը հողմէն փաճ կը լափէին ցանքը մէկ ծայրէն միւսը, չխնայելով ոչ մէկ մոլախոտ, ոչ իսկ թէզ մը կանաչ: Մոռացութեան ժամանակը, ուր չկար յիշողութիւնն անգամ հրդեհին, անոր բոցավառումին, բայց մանաւանդ՝ վառած դաշտերուն, անմշա-կոյթ: *Անապատը քաղաքին մէջ:* Ինչպէ՞ս ապրիլ անապատին մէջ, որ ուրիշ բան չէ եթէ ոչ ստեղծելու անկարելիութիւնը: Ինչպէ՞ս բառնալ անոր ամլութիւնը, բնակիլ մէջը ու յաղթել անոր: Ինչպէ՞ս ելլել անա-պատէն:

Քերթուածը որպէս վայր ստեղծող արարք, ուրկէ կարելի ըլլար մտա-ծել մտահերձող անյիշողութիւնը քանդուած ժամանակին: Քերթուած,

Հանդիպումը խուսափող

այսինքն՝ խիտ, ստուար, հախաղրուող՝ ցանցառի, ցրուածի, որուն ցանցին մէջ ժամանակին թելերը բռնուէին ու խաւ կազմէին: *Եւ ո՞ր ժամանակը կը յայտնուի աւելի ուժգնօրէն քան արձանով որ միջոց կը բանայ, գիրքով որ կեանք կը հիմնէ:*

Քերթուածը նաեւ՝ քանդուած: *Որովհետեւ՝ բանաստեղծութիւնը տեղ մը անկարելի է:*

ՔԵՐԹՈՒԱԾԻՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի ապրելու համար, զայն ըսելու համար: Հին երազ մը հաւանաբար, բառերուն տալու կեանքին ընթացքը. բանաստեղծութիւն մը որ բռնէր զայն էութեան ներկայութեան: Էութիւնը աչքին նման, կամ անտեսանելի շունչին, որ կը ծփայ տողերուն շուրջ, որ կը դիտէ դիրքէ մը՝ ետէն: Ասոր դիմաց՝ գաղտնիք չէ, որ երկար ատեն է՝ քերթուածը դադրած էր տալէ կեանքը, դարձած էր անկարող բռնելու զայն: *Գաղափարներու պէս մարդիկ կային, որոնք արուեստը մեր շուրջ վերածեր էին պարզ միջոցի, ծառայութեան, անվաւեր բեռնակրութեան:*

Քերթուածի փորձը սակայն՝ ինքնիք շուրջ պլլուող ոլորապտոյտ հողմին նման՝ կը դառնար պարապի մը շուրջ ու անկարող էր ելլելու անկէ: Բառերուն ու մտքին միջեւ պատահած էր անջատում մը, եղած էր *վայրիվերում*, ու մէկը միւսը չէր հագներ այլեւս կամ խօսեր: *Լեզուն պարզապէս իմա չէր:* Անապատին մէջ լեզուն չկար: Կար համբուրթիւնը սոսկալի, ուրուականի մը դէմքով: Անվերջ աւագախորումին դիմաց կար պարզապէս աւագին վրայ տառեր գրելու, բառեր գրելու փորձ մը, որոնք ոչ թէ միայն անընդհատ կը ջնջուէին, այլ մանաւանդ՝ անկարող էին լեզու ըլլալու, ուր մնաց՝ մտածում:

Ելլելու համար անապատէն, պէտքը կար պատահարի մը: Կար բաղձանքը շրջումի մը: *Գրութիւնը... կ'ուզէ ըլլալ Լեզուին մէջ դէպք:*

ԴԵՊՔԸ

Կը պատահի երբ էութիւնը կը լքէ բանաստեղծութեան տողերը: Էութիւնը, որ մնացեր էր միշտ քերթուածին հետ՝ տողին հտին, կ'աներեւութանայ: Հատում մը յառաջ կու գայ, տողերուն մէջ իսկ, երբ յանկարծ նախադասութեան ենթական կը ձգէ “ոնիքին վայրը” ու կ'անհետի: Նախադասութիւնը առանց ենթականի կը փլի, արձակելով փոշիի խոշոր սիւն մը մթագնող, որ երբ կը փարատի՝ ի յայտ կը դառ-

նայ գիտակցութեան ջնջումը անվերադարձ: Աչքը / շունչը՝ կորսւած: Ու առանց շունչի՝ ալ ի՞նչ ֆերթութեամբ: Քերթութեամբ, նաեւ՝ անոր լեզուն կը դառնան խնդրական, եթէ ոչ անկարելի:

Շրջումը այսպէս՝ կորուստի փորձառութիւն մըն է, գիտակցութեամբ, արարութեամբ: *Կ'ուզէի կորուստը*: Ստանձնում մըն է ան, երբ ստանձնողը կը փորձէ դէպքը տանիլ մինչեւ իր ծայրը, *Կ'ուզէ զայն ամբողջովին իրականացնել*:

Հարցը որ կը ծագի անշուշտ ֆերթութեամբի անկարելիութեան հորիզոնին՝ *Ի՞նչ էր քերթութեամբ, ի՞նչ էր հիմքը քերթութեամբ*:

ՀԻՄԵՐՈՒ ՊԵՂՈՒՄԸ

Հնարանական արշաւանքի մը նման, երբ ամէն անգամ որ կը փորեն փաղաքին ընդերքը, նոր շերտեր կը յայտնուին, թաղուած մէկը միւսին վրայ, դար դարու վրայ: Իսկ փորութեամբ ու բաց մնացած ֆանի՝ ֆանի տեղեր կը մնային այդպէս լիութեամբ, վերջ ի վերջոյ՝ բաց աղբանոցի մը վերածուելու համար:

Փորել էր պէտք յայտնաբերելու համար ֆերթութեամբի հիմքեր: Կայի՞նք անոնք: Կարդալ ամէն բան նորէն, կարդալ նոր: Ասիկա պեղման առաջին գօտին, մէկ ուղղութեամբ գացող աշխատանք: Ստեղծել ընթերցում / պեղումի մեքենայ մը, մեքենաներ, կարենալ հասնելու համար աւագին տակ մնացած ու փոշիներուն տակ թաղուած հիմքերու: Պեղել գրութեան տակ պահուած, գայն աշխատեցնող համակարգեր, իմաստներ, գոյափոխակներ: Այս ամէնը՝ կարենալ գոյացնելու համար բանաստեղծութեան պատմութեան սարիք մը, անցման փուլեր, առնչելու համար մէկը միւսին օղակ առ օղակ, հասնելու ներկայի մը: Հասնելու համար յատակին:

Կայ նաեւ երկրորդ աշխատանքը, որ է ինքնին ֆերթութեամբի կիրառումին պեղումը, այսինքն անոր աշխատելու ձեւին: Կասեցնել բանաստեղծութեան ու աշխարհին միջեւ իմաստներու երթուղարձը ու դարձնել գայն ինքնիր վրայ, ձգելով որ *գրութիւնը բանի, նշանակէ ինքզինք*: Այսինքն յանձնել բանաստեղծութիւնը լեզուին՝ անոր կիրառումի փորձառութեան: Զգել որ լեզուն գրէ, խօսի ինքզինք: Այսինքն՝ բանի նոր:

Պեղման զոյգ աշխատանքներ, որոնք իրականութեան մէջ կազմալուծման աշխատանքներ են: *Կազմալուծումի այս աշխատանքն է, որ կը կոչուէր հակաքերթութեամբ*: Հակաֆերթութեամբ՝ հակող ու հակադրող

Հանդիպումը խոսափող

Բերթուածին, Բերթուածը վերածող գրելու / գրուելու աշխատանքի՝ *գրութեան: Որ միս մինակ է, ինքն իր հետ:* Առանց էութեան ներկայութեան: Ինչ որ կայ՝ գրուածն է, որ կը կրէ իր յղումները ինքն իր մէջ: Հակաֆերթուածը կու գայ երբ էութեան անհետացումին հետ կը ջնջուի նաեւ գրողը: Անկկա ելք մը կը բեմադրէ ֆերթուածէն, որ կ'առաջնորդէ անոր հիմերուն: Անոր հետ կը մտնենք լեզուէն ներս:

ԼԵԶՈՒՆ

Ան, որ կը շարունակէր բարբառել անապատին մէջ բանաստեղծութեան անունով, կը կարծէր սպողած ըլլալ հրդեհէն: Վերընծիւղումի հասարակ վարկած: Բայց հրդեհը, ըլլալու համար ամենակուլ, չէր կրնար սահման մը ունենալ, ապահովութեան գիծ մը, որմէ անդին բանաստեղծութիւնը շարունակուէր: Բանաստեղծութեան կը մնար առնել հրդեհը իր մէջ, ներգրաւել գայն, այրիլ ու այդպիսով սպառել գայն: Սպառել համատարած աղէտը գայն բերելով գիրին, գայն հագնելով: Այսինքն անցնելով գայն մտքի բովէն, անոր բոլոր ներշնչութեան վտանգներով: *Մտածումը տակաւին կարելի՞ է:*

Լեզուն անշուշտ չի դիմանար: Ատոր համար պէտք է ետ սկսիլ, վերաբանիլ գայն, անոր չփայտան ծայրագոյն կէտէն: Հակաֆերթուածը, կազմալուծելէ անդին ֆերթուածը, գայն կը դարձնէ լեզուական կիրառում մը, արարում մը, ուր խնդրոյ առարկայ կը դառնայ ո՛չ թէ միայն բանաստեղծութիւնը, այլ նաեւ լեզուն:

Պէտք էր ստեղծել լեզուն: Ի՞նչ հասկնալ սակայն լեզու ըսելով: Անկկա լեզուական փորձառութիւնը չէ՞ ինքնին: Գրութիւնը աշխատանք մըն է լեզուի մակարդակին վրայ, անոր տարրերը աշխատացնող, *յարբերութիւն մը լեզուին մէջ լեզուին հետ:* Որով հետեւ *գրողը լեզուի բանուոր մըն է:*

ԳԻՐՔԸ

Սեղանիս վրայ՝ ներմակ կողքով, կապոյտ տառերով վերնագիրը՝ *Զրոյցներ բանաստեղծութեան մասին*, տպուած Երեւան՝ 1999ին, Մատենաշար “Երկ”, թիւ 2, 185 էջ:

Գրողին վաստակը՝ ահաւասիկ ֆառորդ դար է ու աւելին: Նախ ընթերցումներով սկսած, տեսակ մը ասպետական արշաւանք գիրին բախտոցները խուզարկող: Ընթերցումը, որ ոչ թէ միայն գրելով կը

“կարդայ”, այլ կը մտածէ գրուածը, գայն բերելով մտքի հարթակին, բանալու համար գրութիւնը ու ֆողագերծելու հոն գործող *պատկերային, մտածման կազմածները*: Սկսած եմ կարդալ, երբ անդրադարձած եմ որ ընթերցումի մեքենաներ չունինք, այսինքն՝ ընթերցումի մեր միջոցները մնացած են ժիւ. դարու միջոցները...:

Ապա *Հակաքերթուածով* եկող: Իսկ վերջին տարիներուն՝ արձակով, “պատում”ներով, ինչպէս ինք կը կոչէ գանոնք: Տակաւին “գրում”ի մեքենան, որ կը բանի նոյն: Դոնակներուն նման գլաններու շարանին՝ շնչակներ բացխլող, թթուածինը ներս առնող, օդի ու ֆարիւղի բերրի խառնուրդը պայթեցնելու համար ննշման տակ: Արագահարուած ելեւէջը շարժիչի գլաններուն: Արարուողը լեզուն է, այսինքն ապրելու կարելիութիւնը, որ հրդեհուելէ ետք, անցնելէ ետք՝ գրութեան զերօ աստիճանէն, հիմա կու գայ իսկապէս խօսելու հրդեհէն ետքը, այսինքն ստեղծելու, արար առ արար, վայրը ուր ապաստանեցաւ խօսքը լեզու: Ստեղծելու համար գայն նոր, ապաստանեալներու բերնէն մինչեւ գիրը էջին վրայ, որ այլեւս ուրիշ տեղ է: Տարբեր ծամանակ, տարբեր վայր:

Գիրքը, որ կը հաւաքէ գանազան գրոյցներ փառորդ դարու տեսողութեան մը վրայ, որպէս նախադուռ, մուտքի հրաւեր՝ ետին գտնուող կալուածէն ներս: Ի մի բերուած գրութիւններ, ժամանակագրական կարգով, որ կը պտտին հեղինակին լոյս աշխարհ եկած գրութիւններուն շուրջ: Նախ՝ *Տեղագրութիւն քանդուող քաղաքի մը Համարի* առաջին հրատարակութեան առթիւ հարցազրոյցը, լոյս տեսած Պէյրութի *Ազգակի* մէջ, 1978ին: Ապա 1980ին լոյս տեսած *Տրամ* հատորէն ֆաղուած կտորը, ուր ի միջի այլոց կը խօսուի հեղինակին երկրորդ գրքին՝ *Հատուածներ Տօրի* մասին: “Կամ”ի այս թիւին մէջ արտասուած գրութիւնը, որ կը դառնայ *Հակաքերթուածի* շուրջ: Շարքը կ’երկարի գանազան հարցազրոյցներով ու գրութիւններով, հասնելու համար 1999ին *Բանաստեղծութիւն* տարեգիրքէն առնուած գրոյցին ու վերջապէս աւարտելու համար անտիպով մը, որ կը կոչուի “Զրոյցը”: Հատորին խմբագրութիւնը կը պատկանի Արթուր Անդրանիկեանին:

Պիտի ըսէիր՝ հարցազրումները, որ կը դնեն *Զրոյցները*: Նախ՝ որովհետեւ անթիւ “բանաստեղծութիւն ընող”ներուն մէջ էջ է թիւը, եթէ ոչ անգոյ, անոնց որոնք կը հարցադրեն եղածը, ու տակաւին չենք խօսիր իրե’նց ըրածին մասին: Կան հազար տարիէ ի վեր ֆարացած “բանաստեղծական քեմա”ներ: Բանաստեղծութիւնը ունի արդէն յայտնաբերուած *բանաստեղծեր*, ինչպէս կ’ըսէ ինք, կիրարկուած անոր

Հանդիպումը խուսափող

պատմութեան մէջ իսկ, որոնց դիմող գիրը կ'իյնայ գիւտ մը ընելու խաբկանքին ծուղակը: Քանի՜ անգամ պէտք կայ սիրածին կամ հայրենիքին գովքը հիւսելու այս կամ այն ձեւով, որ մարդիկ ձանձրանան: Աւելին. հարցը կը վերաբերի բանաստեղծութեան էութեան իսկ: Երբ գրուածը չի դառնար մտածման առարկայ, կը դառնայ յանկերգ: Պըլտեան ոչ թէ միայն կ'առկաիւ բանաստեղծութեան լեզուն, այլ նաեւ կը խնդրականացնէ անոր կարելիութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ լեզուին կարելիութիւնը: Ստեղծել հարցադրում մը, որ կը մեկնի բանաստեղծութեան պատմութենէն, այսինքն՝ կը փախէ անոր փութերէն, կապելով մէկուն արտադրութիւնը միւսին, հասցնելու համար անոր ծայրը մեր այսօրուան, անոր անիմֆնութեան: Խօսիլ, այսինքն՝ ապրիլ այդ անիմֆնութիւնը, փոխանակ գայն մերժելու, փոխանակ գառածելու անէութեան անուրջներու մէջ: Ստանձնել գայն ամբողջովին: Երբ էութիւնը կը լիէ ֆերթուածը, իմֆնութիւնը կը լիէ ենթական, ուրիշ բան կարելի չէ ընել բացի ներառնելէ լիումը, որ լեզուի տագնապ մըն է, ստանձնելէ այդ անլեզուութիւնը, սպառելու համար գայն լեզուին սփռումին մէջ: Ծրագիր եւ կիրառում, մէկը միւսը հալածող, իրագործող:

Գիրքը կ'ուրուագրէ ծրագրին հանգրուանները՝ հետապնդումն ու ընդլայնումը, ընթերցողին տալով անոր ընթացքին ականատեսը ըլլալու խաբկանքը: Բայց ինչ որ աւելի հետաքրքրական է՝ ընկալելն է, թէ ծրագիրը ինչպէս առաջին գրոյցէն կը յայտնուի, արդէն կայ: Ետքը կու գան անոր տարբեր դիտանկիւնները:

ԽՈՒՍԱՓՈՂԸ

Հանդիպումն է՝ հեռաւորութենէն, ուրկէ կը գրես: Գրել հեռաւորութիւնը, հիմա որ կողքը կը փակես, հեռաչափել, հեռանալ անկէ: Ստեղծել միջոցը, տարածքը, յաջորդ հանդիպումը պատրաստող:

Հանդիպումը հոս կ'աւարտի, աւելի ճիշդ՝ դադար կ'առնէ: Ոչ թէ որովհետեւ կ'ուզէ ելլել անոր սենեակէն, այլ որովհետեւ անոր բնութիւնն է ըլլալ խուսափող: Մտերմութիւն խուսափող, որ կը կարծէ մտնել գրէն ներս, բայց կը մնայ միշտ դուրս: Դուրսէն կը դիտէ: Որովհետեւ ուրիշ տեղ չկայ: Պէտք է *մտնել դուրս*:

Րաֆֆի Ա.ՃԷՄԵԱՆ